

Չորրորդ գրքի վերջում հրատարակչի կողմից գրւած լողւածից, ի միջի ալլոց իմանում ենք, որ «Երախալրիքի» մէջ տպւած հատւածները «ազ և ազ անզերի հավերի կեանքից է առնուած» և թէ «բոլոր պատկերները դէմքի կողմից բաւն հայր տիպար են ներկալացնուամ», Դժւար չէ համոզւել, որ այդ միան լոկ հրատարակիչներին լասուկ խօսքեր են. լիչպէս պատկերները, նույնպէս և բավանդակութիւնը (չէ որ միան անունները հավկալան լինելով), դեռ չէ նշանակում, որ հակերի կեանքից են) ոչինչ բնաորոշ հայկական գծեր չ'ունին, ազ մի անորոշ, սովորական, ընդհանուր եւրոպական ձև ունին. Հրատարակիչը ասում է, որ «Երախալրիքը» գրւած է, երբ հեղինակը 17—22 տարեկան էր, ուստի արդարացնելի է, որ «պատուղը կարող է մի փոքր խակ լինելու» Կարծես մանուկները և հասարակութիւնը պէսավ է սումեն հեղինակի մոքի խակութեան արտադրութիւնները... Հրատարակիչը փառ ասում է.—«Երախալրիքի» մէջ զետեղելով միան մանկական գրւածները, բանաստեղծութիւնները առանձին գրքով կը հրատարակիւն, որովհետեւ իրանց մոքերի խտութեամբ (?) կարող էին անհասկանալի մնալ մանուկներին:—Նթէ այդ բանաստեղծութիւններն էլ վսակ պտուղներու են, ի գուր տեղը մի ուսեցնէք հասարակութեան. առանց դրան էլ նորա տամուրքը խանդարւած է բազմաթիւ անհամ և խակ գրւածներով, մանաւանդ պանաստեղծականու:

Աչսպէս ուրիմն ապդ տեղոր չորս գրքովիների տեղ եթէ տպւէր մի փոքրիկ գրքովէ, վերև վիշած հատւածներից բաղկացած (մի խօսքավ ընտրութեամբ), մենք աւելի մեծ կարծիք կ'ունենայինք թէ հեղինակի և թէ հրատարակչի մասին, խակ մանուկները, տալով 2 ուռելու փոխանակ 50 կոտէկ, կ'ունենային ընթերցանութեան համար մի օգտակար գրքով: Խակ ալժմ 2 ուռելի տալ և գնել այդ չորս ջրալի «խակ» գրքովիները՝ ըսլորովին ապարդիւն մի ծախք է, մեր կարծիքով:

## I. Ա.

---

Ա. ՓԻԼՕԵԱՆ. «ԶՐՈՅՑՆԵՐ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ», Առաջին մաս. Տփխիս, Ռոտինեանի տպար. 1888թ., 4-ծալ. 76 եր. գինն է 40 կոպ.:

Տարրական գրքերը, նա մանաւանդ բնական գիտութիւնների վերաբերեալ, պէտք է կազմւած լինին մի խիստ որոշ սիստեմով, նախաղծով և հետոնողութեամբ. Զը պէտք է երբէք մի բան պատմել, առանց նախ և առաջ ամենահասարակ հիմունքները (առանց որոնց անկարելի է պատմածը հասկանալ) պարզեւու. Ալդպիսի գրքովիներ պէտք է աչսպէս կազմւած լինին, որ ընթերցողը կամաց-կամաց, սիստեմաբար ծանօթանակ նրան մասակարարւող գիտելիքների հետ:

Պ. Ա. Փիլօնանը սկսողին (հեղինակը աչքի առաջ է ունեցել հարոց ծխական դպրոցի աշակերտներին, նաև «ան փոքրիկ և հասակաւոր ընթերցասէրներին, որոնք դպրոցում ուսած լը վնելով բնական պատմութիւնը, կը փափագին լցուցանել ալդ թերին իրանց մոտաւոր զարդացման մեծ խնդրում») առանց ընդհանուր, ամենաստարարական տեղեկութիւններ տալու դասաւորութեան (կլասսիֆիկացիաի) հիմունքների վրայ, առանց ցող տալու կենդանաբանութեան մէջ ամենաճշաճաւոր բաժանմունքները, առանց ալդ բաժանմունքների բնարուց մի ընդհանուր նկարագիրը անելու, և, վերջապէս, առանց թեկու սկզբից գոնէ ամենազիմաւոր բաժանմունքների լոկ անունները, դիցուք հէնց ակապէս՝ կենդանիները բաժանմում են. Ողնաշարաւորների և Անողնաշարաւորների. Ողնաշարաւորներին պատկանում են հետեւեալ դասերը՝ կաթնասուններ, Թուչուններ, Սողուններ, Երկակենցաղներ և Ձկներ, իսկ Անողնաշարաւորներից մնաք կը զնենք միայն միջառոնների դասը» Մենք ասում ենք, գոնէ առնւազը, ակս պէտք է ամէր իր նոր սկսողներին. իսկ պ. Ա. Փիլօնանը ակապէս է սկսում, ոչինչ չ'ասելով նախապէս (եր. 7).

## Ա.

## Մ Ա Ր Դ

լետու մի քանի երեսից լետու (եր. 12), դնում է մի ընդհանուր վերնագիր՝  
ԿԱԹՆԱՍՈՒԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

## Բ.

## Կ Ա Տ Ո Ւ

Էլի մի քանի երեսից լետու (եր. 30) Գլուխ Բ. Թուչուններ. լետու (եր. 41)  
գլուխ Գ. Սողուններ և Ձկներ:

Նախ՝ որ ալդ վերնագիրներից սկսողը ոչինչ չի հասկանալ դասաւորութեան մասին. Երկրորդ՝ ինչու մարդը կաթնասուններից դուրս է. Երրորդ՝ ուր է «պլուխ Ա.», որ եր. 30 լանկարծ պատահում ենք «պլուխ Բ.». չորրորդ՝ ինչ հասկանալ սկսողը թէ սողունները և ձկները առանձին առանձին դասերի են պատկանում, քանի որ սկզբից ոչինչ հասկացողութիւն չէք տւել դասաւորութեան ամենաստարարական դիտելիքների մասին. Կենդանաբանութեան մէջ ամենամեծ երկու բաժանմունքների վերաբերեալ Ողնաշարաւորների (Vertebrata) և Անողնաշարաւորների (Evertebrata), նոցա մէջ եղած զանազանութեան, նոցա ընդհանուր բնարուցութեան (харакտերիստիկա) մասին նա ոչինչ չի ասում, ալ միան եր. 45, ի միջի ալլոց, զրից անելիս, մի տեղ բդէղի մասին խօսելիս, նկատում է. «վերև զննուած կենդանիների ուկրակաղմի ամենակարևոր մասն ողնաշարն է, ուստի նրանք կոչւում են ողնաշարաւոր կենդանիք և որովհետև բգէզը չ'ունի ալդ, կոչւում է անողնաշարաւոր կենդանիու. Լաւ. ինչպէս հասկանալ սկսողը»

թէ շերամը, ո՞յիլը, ճանճը, լուն և ավն, ողնաշարաւորներին են պատկանում, թէ անողնաշարաւորներին։ Զէ որ դուք, պ. Ս. Փիլօնան, սպասում էք որ սկսողը դեռ ոչինչ չը գիտէ։ Հէնց դորա համար զգուշացնում էք նորան ասելով. «Թիթեռնիկն էլ բղէզի նման ոսկրներ չ'ունի» (եր. 48). Ռուբեն եթէ միւսների մասին (ո՞յիլ, լու, ճանճ և ավն) ոչինչ չէք ասել, ընթերցողը կարող է կարծել թէ նոքա ոսկրներ ունին։ Ախար, չէ որ ընթերցողները դեռ ոչինչ չը գիտեն, հէնց դորա համար լուրջ կերպով նոցա ասում էք. «Կովը ծնում է հորթեր, որոնց կերակրում է իր կաթով» (եր. 26). «Ամքին ծնում է գառներ, որոնց կերակրում է իւր կաթով» (եր. 28) և ավն, Եւ շանկարծ ապահովի ընթերցողների առաջ շարում էք կմախքի ոսկրների անունները, նկարագիրները, չը տալով մինչև անգամ մի ամենաանհրաժեշտ, մի որ և իցէ կաթնասունի կմախքի նկար։ Մինչդեռ զիրքը զարդարել էք, գործի համար բոլորովին աւելորդ, պահուճանքներով, մանրմուճը նկարներով «Աղբիւրից» վերցրած։ Ի՞նչպէս ձեր ընթերցողը, որը կեանքում ոչ մի կմախք չի տեսել և դեռ ոչինչ չը գիտէ և առաջին անգամ է լսում մինչև անգամ թէ «հաւը ձու է ածում» (եր. 51), ինչպէս աղպիսի ընթերցողը հասկանալ ձեր մարմնակազմական բացատրութիւնները, առանց մի ամենահասարակ նկարի։

Բոլոր մարմնակազմական (անասումիական) և Փիղիօլօգիական ու կենցաղավարական տեղեկութիւնները անկանոն, առանց որոշ մի կարգի, խառնափնթոր, կցկոտուք շպրթւած են դէս ու դէն ամենաավանդակ կերպով։ Էլ ալն չի, որ մի լախոնի հետևողութեամբ, պարզ սկսի մի բան նկարագրել, ավ անկատար, խառնափնթոր, դէսից դէնից մի քանի անկապ, աննշան խօսքեր է որ կրինում են։ Դիցուք խօսում է կմախքի մասին։ Փոխանակ բոլոր կաթնասունների կմախքի վերաս մի ընդհանուր տեղեկութիւն տալու, պարզելով։ ասածը մի որ և իցէ նկարի վերաս, և ամեն մի ներկապցցին գալով լատկանիշ զանազանութիւնը նկատելու, պ. Ս. Փիլօնը ամեն մի կաթնասունի մասին, առանճանապէս, անկապ, ոչինչ չը պարզող խօսքեր է որ կրինում է. Առնենք, օրինակի համար, նորա ասածները վերին և ներքին անդամների (ծալքերի, ալսիճքն՝ ոտների) մասին։ «Կաթնասուն կինդանիներ» վերնագրի տակ առաջին տեղն է բռնում «կատուն», որի ծալքերի կազմութիւնը ալսպէս է բացատրում իր ընթերցողներին (եր. 12). «Առաջին ոտները կպած են ողնաշարին թիւակի երկար ոսկրով, իսկ լստին ոտները—կոնքի ոսկրներով» (իսկ ուրիշ կաթնասունների մօտ ինչպէս է, միթէ մի ուրիշ տեսակ է). լստով (եր. 13) «կատուի լւրաքանչիւր ոտը կազմուած է երեք երկարացրած ոսկրներից, որոնք միաւորուած են չողերով և աղդ ոսկրների միաւորուած տեղը շարժական է. ոտները վերջանում են կարծ մատուերով» (միթէ զա է ծալքերի կմախքի նկարագիրը և միթէ ոսկրների միաւորութիւնը ուրիշ կենդանիների մօտ ալլապէս է)։ Ցեսով գալով Շանը՝ ասում է. «Շան առաջին ոտները բաղկանում են ուսուկ-

րից, դաստակից և թաթից, իսկ վասին ոռները—ազդրից, ոլոպից ու ներբանից. ոլոգների վերև գտնում է փոքրիկ ծնկոսկրը» (բոլորովին վակրի վերու խօսքեր). եթէ չեք կամեցնել բոլոր ոսկորները թւմլ, գոնէ բաժանմունքները ճիշդ ասէիք), Զիոռ ոտների մասին արժանի է գտնում նկատել միայն. «Ձիու պինդ ու ուժեղ ոտները վերջանում են սմբակով, որը շատ հաստ ու լաճ է» (եր. 23). (իսկ որ աւելի նշանաւորն է և հետաքրքրելին՝ թէ ալդ սմբակը ինչ բան է, միւս կաթնասունների ծալքերի որ մասին է համապատասխանում, դորա մասին աւելորդ է համարեն հեղինակը խօսել): Ասացէք խնդրեմ, ինչ «հիմնաւոր և կանոնաւոր» հասկացողութիւն կարող է կազմնել ընթերցողը, հէնց օրինակի համար, կաթնասունների վերին և ներքին անդամների կազմութեան մասին. Պէտք է նկատել, որ նույնքան անկատար են և միւս տեղեկութիւնները. Պ. Փիլօնեանը ամեն տեղ իր պարտքն է համարում կրկնել. «Մարդու մարմինը կարմիր է և տաք» (եր. 10), ակատվի արինը տաք է և կարմիր, չնչում է թռքերով (եր. 14) (իսկ մարդը ինչնվ), Հասնելով Շանը՝ էլի ասում է. «Նրա արիւնն էլ նոյնպէս տաք և կարմիր է, չնչում է նոյնպէս թռքերով» (եր. 17). Ակապէս, պարոնը ոչինչ հասկացողութիւն չունի կարգ ու կանոնի և դասագրքեր կազմելու մասին. Կարծեմ բաւական է ինչքան խօսեցինք. եթէ քննենք բոլորը, պէտք է մի նոյն հաստութեամբ, գոյցէ և աւելի, գիրք գրենք:

Սի խօսքով, կարելի է ասել, որ պ. Ս. Փիլօնեանի «Գրոցներո»-ը մի ամենախստապակ, տպէտանձնալստահութեան, աֆէլիստական գրոծ է. Զը նաևած հեղինակի մեծ մեծ խօսքերին (անս Աղդ), նա ոչ միայն ալդ դասագրով չէ կարող Ացուցանել թերին իւր փոքրիկ և հասակաւոր ընթերցաւէրների մտաւոր զարգացման մեծ խնդրում», ազ նաև կարող է միայն սկսողների մտքերում լարուցանել կատարեալ խառնաշխոթութիւն և թերի, ստոր կարծիք բնական պատմութեան մասին.

## Լ. Ս.

Ս. ՓիլօնԱն. «ԿՈՐԱԾ ՄԱՐԴԱՐԻՑ». Վէպնկարազդիր նոր-Բայազէտի վարք ու բարքի. Տփխիս. Տպարան Մ. Դ. Ռուբինեանցի, 1888 թ. 8-ծալ, 175 եր. տառ. № 12, գինն է 50 կոպէկ:

Ակր գրքովից մի բաւական գեղեցիկ և բազմակողմանի նկարագիր է և Սևանակ լճի մօտ գտանաող ան ծաղկաւէտ, կանաչազարդ ու աղբերառատ դիւղաքաղաքի, ուր օդի մեղմութիւնը («անմահական») աղբիւների ջրերի հետ միասին՝ պարգևել են օֆէօկչեցին հալին առողջ, վակելուչ կաղմւածք, առողջ և գեղեցիկ պատկեր, կորովի սիրու և ուրախ, զւարճամէր բնաւորութիւն, Աքնաեղ ջերմեռանդ ուխտագնացութեան հետ կապւած մշտական քէջն ու ուրախութիւնը, զուռնան ու նաղարան, երդն ու պարը վերջ